# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ
համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Հեռ. (0231)60136 ,

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N 141
*08 հոկտեմբեր 2014թ.*

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումները և օգոստոս ամսվա արձակած կարգադրությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Սեյրան Մարկոսյան

*Կատ.*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 42

## ՀՈՒՍԻԿ ԱՎԱԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ, 36-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N164-Ն որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի բնակչուհի Ժանետա Սիմոնյանի 2014 թվականի օգոստոսի 25-ի դիմումը.

Որոշում եմ՝

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակիչ Հուսիկ Ավագյանի (ծնված՝ 23.01.2001թ) նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով նրա հարազատ տատիկին՝ Ժանետա Սիմոնյանին:

2.Հսկողություն սահմանել Հուսիկ Ավագյանի նկատմամբ նշանակված խնամակալ Ժանետա Սիմոնյանի գործունեության նկատմամբ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

2014թ. հոկտեմբերի 8-ին
գ.Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 43

## ՍՈՒՐԵՆ ԴԱՆԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ, 36-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N164-Ն որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի բնակչուհի Մարիամ Դանելյանի 2014 թվականի հուլիսի 8-ի դիմումը.

Որոշում եմ՝

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակիչ Սուրեն Դանելյանի (ծնված՝ 21.05.2009թ) նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով նրա հոր կնոջը՝ Մարիամ Դանելյանին:

2.Հսկողություն սահմանել Սուրեն Դանելյանի նկատմամբ խնամակալ նշանակված Մարիամ Դանելյանի գործունեության նկատմամբ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

2014թ. հոկտեմբերի 8-ին
գ.Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 44

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1893-Ն որոշումը.

Որոշում եմ՝

1.Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի սեփականություն համարվող գյուղ նշանակության այլ հողատեսքի 0.0232հա հողատարածքը (ԿԾ 0222-0009) և 0.01572 հա (ԿԾ 0691-0002) հողատարածքը վաճառել աճուրդային կարգով:

2.Վաճառվող տարածքի յուրաքանչյուրի համար մեկնարկային գին սահմանել 50 000 դրամ(ԿԾ 0222-0009) և 30 000 դրամ (ԿԾ 0691-0002): Յուրաքանչյուր քայլը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

2014 թ. հոկտեմբերի 8-ին
գ.Գայ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136

## Ո Ր Ո Շ Ու Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 45

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 4.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշման 1-ին կետի <<ա>> ենթակետով հաստատված կարգի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 21-ի N 39-Ն որոշումը և Դավիթ Ներսիսյանի 2014 թվականի սեպտեմբերի 9-ի դիմումը.

Որոշում եմ

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակիչ Դավիթ Ներսիսյանին տալ շինարարության թույլտվություն՝ Գայ համայնքի վարչական տարածքում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում (ԿԾ 0003-0030) կատարելու բնակելի տան կառուցում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ**

2014թ. հոկտեմբերի 8-ին
գ.Գայ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 46

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 4.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշման 1-ին կետի <<ա>> ենթակետով հաստատված կարգի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 21-ի N 39-Ն որոշումը և Սաթենիկ Մարտիրոսյանի 2014 թվականի սեպտեմբերի 19-ի դիմումը.

Որոշում եմ՝

1.Քաղաքացի Սաթենիկ Մարտիրոսյանին տալ շինարարության թույլտվություն՝ Գայ համայնքի վարչական տարածքում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում կատարելու (ԿԾ 0077-0006) ավտոտնակի կառուցում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

2014թ. հոկտեմբերի 8-ին
գ.Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 47

### ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԵՒ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Կառլոս Աստրյանի 2014 թվականի սեպտեմբերի 19-ի դիմումը.

Որոշում եմ՝

1.Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Գարնանային փողոց, տուն 35 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Կառլոս Մկրտչի Աստրյանի (ծնված՝27.07.1950թ.) , Ժենիկ Մկրտչի Աստրյանի (ծնված՝10.09.1932թ.) և Մկրտիչ Կառլոսի Աստրյանի (ծնված՝05.04.1980թ.) գույքային իրավունքը՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական 0.18 հա հողամասին կից 212.0քմ ավել օգտագործվող հողամասի նօրինականհողամասիվրակառուցվածբնակելիտաննօժանդակ շենք-շինությունների նկատմամբ (բնակելի տուն- 298.0քմկառուցված՝ 1973թ., բացպատշգամբ – 17.9քմկառուցված՝ 1973թ., մառան – 5.2քմկառուցված՝ 1973թ., պահեստ– 4.7քմկառուցված՝ 1973թ., թոնրատուն- 16.1քմկառուցված՝ 1973թ. և ծածկոց՝ 10.7քմկառուցված՝ 1973թ.) բնակելի տունը և օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տներիկարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 1,2,3 հոդվածների պահանջները: Հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցելու Կառլոս Մկրտչի Աստրյանի (ծնված՝27.07.1950թ.) , Ժենիկ Մկրտչի Աստրյանի (ծնված՝10.09.1932թ.) և Մկրտիչ Կառլոսի Աստրյանի (ծնված՝05.04.1980թ.))սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան և օժանդակ շենք-շինությունների

նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տրամադրել Գառնանային փողոց, թիվ 35 հասցեն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

2014թ. հոկտեմբերի 8-ին
գ.Գայ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 48

### ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ և ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Սամվել Մանուկյանի 2014 թվականի սեպտեմբերի 24-ի դիմումը.

Որոշում եմ՝

1.Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Գորկու 2 փողոց, տուն 62 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Սամվել Վազգենի Մանուկյանի(ծնված՝26.03.1960թ.) գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.15 հա հողամասին կից 250.0քմ ավել օգտագործվող հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և օժանդակ շենք-շինությունների նկատմամբ (բնակելի տուն- 23.0քմ կառուցված՝ 1990թ., և ծածկոց՝ 25.7քմ կառուցված՝ 1999թ.) բնակելի տունը և օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տներիկարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 1,2,3 հոդվածների պահանջները: Հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցելու Սամվել Վազգենի Մանուկյանի(ծնված՝26.03.1960թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա

բնակելի տան և օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տրամադրելԳորկու 2  փողոց, թիվ 62հասցեն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

2014թ. հոկտեմբերի  8-ին
գ.Գայ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 49

### ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետով, Գայ համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 43-Ն որոշման 2-րդ կետով.

Որոշում եմ

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի 2014 թվականի բյուջեի 01/6/1-ի հոդվածից 24 556 դրամ տեղափոխել 4637 հոդվածին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

2014թ. հոկտեմբերի 8-ին
գ.Գայ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

25 ՕԳՈՍՏՈՍԻ 2014թվականի N 16

## ԱՆԱՀԻՏ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 126-րդ հոդվածով, հիմք ընդունելով Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 17-ի թիվ 26 որոշումը և Գայ համայնքի ղեկավարի 2014 թվականի հուլիսի 15-ի թիվ 40-Ա որոշումը.

Կարգադրում եմ՝

1.Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի <<Գայի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրեն Անահիտ Մկրտչյանին վերաիրամանագրել որպես <<Գայի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի տնօրեն:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

2014թ. հոկտեմբերի 8-ին
գ.Գայ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2014թվականի N 17

### ԱՆԱՀԻՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Անահիտ Մկրտչյանի 2014 թվականի օգոստոսի 25-ի դիմումը.

Կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի <<Գայի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի տնօրեն Անահիտ Մկրտչյանին տրամադրել 2014 թվականի ամենամյա արձակուրդը՝ 2014թվականի սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ՝22 աշխատանքային օր տևողությամբ (20աշխատանքային օր՝ նվազագույն և 2 աշխատանքային օր՝լրացուցիչ):

2,Անահիտ Մկրտչյանին աշխատանքի մեջ համարել 2014 թվականի հոկտեմբերի 1-ից:

3,Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ**

2014թ. հոկտեմբերի 8-ին
գ.Գայ